

Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի կրտսեր գիտաշխատող
ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի ասպիրանտ
tnelsonovna@gmail.com

**17-ԴՐ ԴԱՐԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՏՊԱԳԻՐ ԳՐՔԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑՈՒՐԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Բանալի բառեր և արտահայտություններ. 17-րդ դար, աշխարհաբար, տպագիր գիրք, յուրահատկություն, շարահյուսական համակարգ, նախադասության գլխավոր անդամներ, նախադասության երկրորդական անդամներ, կապակցություն:

Ключевые слова и выражения: 17-ый век, ашхарабар, печатная книга, особенность, синтаксическая система, главные члены предложения, второстепенные члены предложения, сочетание.

Key words and expressions: 17th century, Modern Armenian, printed book, peculiarity, syntactic system, primary members of the sentence, secondary members of the sentence, combination.

Աշխարհաբար առաջին տպագիր գրքերն առանձնահատուկ դեր ունեն հայ տպագրության և հայոց լեզվի պատմության ուսումնասիրման համար: Թեև աշխարհաբարի տարրերն ի հայտ են գալիս 17-րդ դարից առաջ ստեղծված գրական հուշարձաններում¹, սակայն 17-րդ դարում են տպագրվում աշխարհաբար առաջին գրքերը՝ «Արիեստ համարողութեան ամբողջ և կատարեալ» (Մարսել, 1675), «Պարզաբանութիւն հոգեւնուագ սաղմոսացն Դաւթի մարգարէին» (Վենետիկ, 1687), «Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի» (Ամստերդամ, 1699): Այս երկերի լեզվական համակարգը, ընդհանուր առմամբ, պարունակում է ոչ թե աշխարհաբարյան առանձին տարրեր, այլ հայերենի լեզվական մի շարք նոր իրողությունների ամբողջություն է:

¹ Տե՛ս Է. Մկրտչյան, Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Երևան, 1980, Է. Մկրտչյան, «Աշխարհաբար» տերմինի մասին, Բանբեր Երևանի Համալսարանի, 3 (39), 1979, Վ. Մնացականյան, Վաղ աշխարհաբարը ժամանակակիցների բնութագրմամբ, «Հայոց լեզու և գրականություն» գիտական աշխատությունների միջբուհական ժողովածու, Երևան, 1987, էջ 214 նն:

17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի շարահյուսական համակարգն աչքի է ընկնում տարբեր յուրահատկություններով, որոնց թվում են շարահյուսական կապակցության միջոցները, եղանակները, նախադասության տեսակները, գլխավոր և երկրորդական անդամների հարաբերությունը: Նշված բոլոր իրողությունները մեկ հոդվածի սահմաններում անհնար է ներկայացնել, մենք անդրադառնում ենք շարահյուսական ամենակարևոր հարցադրումներից մեկին՝ նախադասության գլխավոր և երկրորդական անդամների առանձնահատկություններին:

Ենթակա և ստորոգյալ: *Ենթակայի և ստորոգյալի արտահայտությունը:* 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերում ենթական, որպես կանոն, արտահայտվում է ուղղական հոլովով, ինչպես՝ «Բայց թե ընկերութեան մէջն ժամանակ անկանի, քիչ մի դժուար կու լինի բանն...»², «Այս սաղմոսումս կուխոսի մարգարէն ի բերանոյ տառապելոց ի հալածանս վասն ճշմարտասիրութեան»³, «Տանձկայ քահրիբարի քաշն 153 դրհամ է»⁴ ևն:

Վերոհիշյալ երկերում, բայական ստորոգյալից բացի, հանդիպում են տարբեր խոսքի մասերից կազմված անվանաբայական ստորոգյալներ, ինչպես՝ **գոյականից**՝ «Համարողութիւնն մին արհեստ մի է...» (ԱՀ, 1), «...դու իմ ճշմարիտ հայրն ես և Աստուածն ես» (Պ, 110), **ածականից**՝ «...թէ որ երկուքէն մնացածն հաւասար են...» (ԱՀ, 10), «Ամա միշտ 3 թիվն գլխաւորք են և յայտնիք» (Գ, 72), **դերանունից**՝ «Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի կամքն և դիտաւորութիւն այն էր միշտ...» (Պ, 12), «Ապրիշումի ահվալն այս է...» (Գ, 42), **մակբայից**՝ «...իմ նախատինքն և անարգանքն իմ աչքիս առաջնն է» (Պ, 226), **դերբայից**՝ «...շիտակ է բարդած...» (ԱՀ, 10), «...և ինձ գորութիւն և կարողութիւն տվօղ է իւր քաջ և արի

² Արհեստ համարողութեան ամբողջ և կատարեալ, Մարսել, 1675, էջ 118: Բոլոր մեջբերումներն աշխատանքում ներկայացնում ենք բնագրային ուղղագրությամբ, ուղղագրական հնարավոր սխալներն ընդգծել ենք մեկ գծով: Կետադրությունը համապատասխանեցրել ենք մերօրյա կանոններին: Մեջբերումների և օրինակների մոտ նշել ենք էջերը, գրքի անվանումը տրված է նաև «Արհեստ համարողութեան», ԱՀ տարբերակներով:

³ Պարգաբանութիւն հոգեւորաւ սաղմոսացն Դաւթի մարգարէին, Վենետիկ, 1687, էջ 613: Գրքի անվանումը տրված է նաև «Պարգաբանութիւն», Պ տարբերակներով:

⁴ Դ. Վանանդեցի, Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի, Ամստերդամ, 1699, էջ 11: Գրքի անվանումը տրված է նաև «Գանձ», Գ տարբերակներով:

տղամարդերով» (Պ, 585) ևն: Առավել հաճախադեպ են գոյականից կազմված անվանաբայական ստորոգյալները:

Ստորոգյալի քննության ընթացքում հարկ ենք համարում անդրադառնալ նաև հետևյալ կապակցություններին՝ *ուզել բայի դիմավոր ձև+լրացում դիմավոր բայ կամ անորոշ դերբայ*: Ուզել բայի դիմավոր ձևի և լրացում դիմավոր բայի կամ անորոշ դերբայի կապակցությունների գործածությունը կարող է հուշել վերոհիշյալ երկերում արևելյան բարբառների ազդեցության մասին, քանի որ *դիմավոր բայ+դիմավոր բայ* կապակցությունը, ինչպես նշում է Ռ. Իշխանյանը, հիմնականում հատուկ է արևելյան բարբառներին, օրինակ՝ Երևանի, Նոր Զուղայի ևն (թեև ստորև բերվող օրինակների մի մասում առկա է ներկա ժամանակի *կու (կը, կ)* եղանակիչը): Արևմտյան բարբառներում այս հատկանիշը կայունացած չէ⁵: Արարատյան բարբառին նվիրված իր աշխատության մեջ *ուզել* բայի և անորոշ դերբայի կապակցության վերաբերյալ Ռ. Մարկոսյանը նշում է. «Անորոշ դերբայի կազմության մեջ հետաքրքրական երևույթ ենք տեսնում Արաքսի խոսվածքում: *Ուզել* բայի հետ, հաճախ նաև նախադասության այլ կազմություններում բայական բաղադրյալ ստորոգյալի մաս կազմող անորոշ դերբայը արտահայտվում է ըզձական ապառնիով, վերջավորության չ բաղադրիչն ընկնում է, իսկ է լծողը փոխարկվում է /-ի: Օրինակ՝Էրեխեն ուզըմ ա քնի, Մէրն ուզում ա տղին տուն տանի....»⁶:

Ուզել բայի դիմավոր ձևի և լրացում դիմավոր բայի կապակցությունները բնութագրական իրողություն են «Արիեստ համարողութեան» երկում, որով այն հակվում է դեպի արևելյան բարբառները, ինչպես՝ *ուզենք իմանալք* (ԱՀ, 34), *ուզենք բարդեմք* (ԱՀ, 82) ևն: Հանդիպում են շատ քիչ օրինակներ, երբ *ուզել* բայի դիմավոր ձևը կապակցվում է *անորոշ դերբայի* հետ, ինչպես՝ *ուզենք փորձել* (ԱՀ, 15), *կուզեմք իմանալ* (ԱՀ, 112) ևն: «Պարզաբանութիւն»-ում ևս կիրառվում են *ուզել* բայի դիմավոր ձևի և լրացում դիմավոր բայի կապակցություններ, ինչպես՝ *կուզեն քանացնեն* (Պ, 17), *կուզէք.... հաճոյանայք* (Պ, 24) ևն: Գրեթե հավասարաչափ գործածվում են նաև *ուզել* բայի դիմավոր ձևի և *անորոշ դերբայի* կապակցություններ, օրինակ՝ *կուզէր անել* (Պ, 36), *կուզեմ երնիլ* (Պ, 67) ևն:

⁵ Տե՛ս Ռ. Իշխանյան, Նոր գրական հայերենը XVII-XVIII դարերում, Երևան, 1979, էջ 62:

⁶ Ռ. Մարկոսյան, Արարատյան բարբառ, Երևան, 1989, էջ 143:

«Գանձ»-ում հանդիպում են միայն *ուզել* բայով և *անորոշ դերբայով* հետևյալ կապակցությունները՝ *ուզէ... տանել* (Գ, 37), *կուզէ... բաժին անել* (Գ, 65), *կուզէ իմանալ* (Գ, 75), *ուզենան իմանալ* (Գ, 76):

Ենթակայի և ստորոգյալի շարադասությունը: «Արիեստ համարողութեան» երկում պահպանվել են ենթակայի և ստորոգյալի գրաբարյան շարադասության հետքեր՝ է օժանդակ բայի առաջադասությամբ, ինչպես՝ «...50 ստակն, որ է մին կարտ» (ԱՀ, 80), «100 ստակն, որ է երկու կարտ կամ կէսն» (ԱՀ, 80) ևն: Ենթական հիմնականում նախադաս է, ինչպես՝ «Բայց էս խրատներս օրինակով լաւ կու պարզվի...» (ԱՀ, 54), «Մին մարդ մի ունի այսչափ մառչիլ...» (ԱՀ, 132) ևն: Հաճախ են հանդիպում նաև ստորոգյալի առաջադասությամբ նախադասություններ, որոնք աշխարհաբարի շարադասության տեսանկյունից կարելի է դիտել որպես շրջուն շարադասության օրինակներ, ինչպես՝ «...և այսպէս կուզտվի թիվն բազմացուցած առանց նեղութեան...» (ԱՀ, 34), «կուլինի բովանդակ բազմապատկածն չորս միլիոն...» (ԱՀ, 37) ևն:

«Պարզաբանութիւն»-ում նախադաս ենթակայով նախադասությունները լայն կիրառություն ունեն և պայմանավորում են ուղիղ շարադասությունը ենթակայի և ստորոգյալի հարաբերակցության տեսանկյունից, օրինակ՝ «...նորա բանից և քարոզութեանց տերնն ամեննին չի պիտի թափվի...» (Պ, 14), «Դարձեալ, անօրէն և նենգաւոր դպիրքն և փարիսեցիքն չեն յարիր ի դատաստան...» (Պ, 15) ևն: Սակայն հաճախ են գործածվում նաև նախադաս ստորոգյալով նախադասություններ, ինչպես՝ «Այսինքն՝ օրինեց Աստուած զհրեանք իւր երկնային օրհնութեամբն...» (Պ, 581), «Այս սաղմոսումս կու աղօթէ մարգարէն առ Աստուած...» (Պ, 583) ևն: Հաճախադեպ են նաև գրաբարյան տարբեր տարբերով նախադասությունները, որոնք երկին գրաբարյան երանգ են հաղորդում, օրինակ՝ «...պարտ է խնդրել զնա...» (Պ, 11), «Այսինքն՝ Տէրն իմ Յիսուս Քրիստոս, որ է հովիւ բարի...» (Պ, 115) ևն:

«Գանձ»-ում գերակշռում են նախադաս ենթակայով նախադասությունները, ինչպես «Արիեստ համարողութեան» երկի շարահյուսական համակարգում, օրինակ՝ «Մին լիբրէն 108 դրհամ է» (Գ, 10), «Այլ միւս քաշ կայ Հնդուստան...» (Գ, 16) ևն: Գործածվում են նաև նախադաս ստորոգյալով նախադասություններ, որոնք, սակայն, խիստ սակավ են, ինչպես՝ «Լինի մին ապրշմի դիտորն 2268 դրհամ» (Գ, 10), «Կայ այլ միւս դանթար...» (Գ, 20) ևն: Այս երկում ևս հանդիպում են գրաբարյան շարադասության որոշ տարբեր, օրինակ՝ օժանդակ բայի առաջադասություն՝ «Լիօնացիք, որք են ի Ֆրանցիայ...» (Գ, 9), «Են կէսակէս քրիստոնեայք» (Գ, 55) ևն:

Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը: Վերոհիշյալ երկերի շարահյուսական համակարգում ենթական և ստորոգյալը համաձայնում են թվով և դեմքով, սակայն երբեմն հանդիպում են նաև թվային անհամաձայնության օրինակներ, ինչպես՝ «....որ հեշտ լինի, մտքերս չի խորթվի» (ԱՀ, 8–9), «Այսինքն՝ իմ գործությունս և իմ կարողությունս թրծած ամանի նման չորացաւ....» (Պ, 111), «....ժամանակաւ բազի բաներ կու փոխվի, ամա մեր գրածն բոլորովիմք սուտ չէ դառնալու» (Գ, 54) ևն: Անհամաձայնությունն ավելի հաճախադեպ է «Պարզաբանություն» երկում:

Վերոնշյալ օրինակները բաղառության արտահայտություններ են: Մ. Աբեղյանը բաղառությունը սահմանում է որպես քերականական ձև, որով մի բառը համաձայնում է մյուսին ոչ թե ըստ ձևի, այլ ըստ բովանդակության, իմաստի⁷: Նա հոգնակի ենթակայի հետ եզակի ստորոգյալ դնելը համարում է ռակաբանություն, սխալ⁸: Նման գործածությունները ոչ կանոնավոր են նաև մեր քննած երկերի պարագայում:

Որոշիչ-որոշյալ կապակցություն: Ածականի շարահյուսական պաշտոնը հիմնականում որոշիչ դեր կատարելն է: Հ. Ավետիսյանը, անդրադառնալով ածական որոշիչ և որոշյալի համաձայնությանը, նշում է՝ նախադաս բազմավանկ ածական որոշիչը հոլովով և թվով չի համաձայնում որոշյալին, իսկ հետադաս ածական որոշիչը հոլովով և թվով համաձայնում է որոշյալին (երկու դեպքում էլ կան շեղումներ)⁹: Այլ խոսքի մասերով արտահայտված որոշիչների դեպքում ևս գրաբարում կային համաձայնության կանոններ¹⁰: Մեր լեզվի զարգացման ընթացքում համաձայնությունը պահպանվել է ենթակայի և ստորոգյալի, բացահայտյալի և բացահայտյալի միջև, իսկ որոշիչը և որոշյալը կապակցվում են առդրությամբ:

«Արհեստ համարողութեան» երկում որոշիչի և որոշյալի միջև համաձայնություն չի գործում, հանդիպում է մեկ-երկու բացառություն, օրինակ՝ *համարողականի արհեստի* (ԱՀ, 1): Որոշիչը հիմնականում նախադաս է, ինչպես մյուս երկերում՝ *վերջի գիրն* (ԱՀ, 53), *բաժանող գիր*

⁷ Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Զ, Երևան, 1974, էջ 408:

⁸ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 501:

⁹ Տե՛ս Հ. Ավետիսյան, Որոշիչ-որոշյալ կապակցությունը գրաբարում, Երևան, 1972, էջ 23–34:

¹⁰ Քանակական թվականները գոյականների հետ գործածվելիս համաձայնում էին տարբեր ձևերով, դասական թվականները հիմնականում հոլովվում էին հետադաս կիրառության դեպքում, անձներական թվականները գոյականների հետ սովորաբար գործածվում էին նախադաս, համաձայնում թվով և հոլովով: Դերանունների տարբեր տեսակներ ևս համաձայնության առանձնահատկություններ էին ցուցաբերում:

(ԱՀ, 55) ևն¹¹: Հազվադեպ գործածվում են նաև հետադաս որոշիչներ, օրինակ՝ *թիվն բազմացուցած* (ԱՀ, 34), *գիրն բազմապատկող* (ԱՀ, 38, 40 ևն) ևն:

«Պարզաբանություն»-ում որոշիչը հիմնականում նախադաս է և չի համաձայնում որոշյալին, օրինակ՝ *մեղաւոր մարդկանց չար գործոցն* (Պ, 12), *կեղծաւոր և խաբէվիայ փարիսեցւոց* (Պ, 12) ևն: Սակայն հանդիպում են նաև այնպիսի կապակցություններ, որոնցում նախադաս որոշիչը համաձայնում է որոշյալին, ինչպես՝ *սրբոյ եկեղեցւոյ անարատի հարսին Քրիստոսի* (Պ, 475), *այլոց սրբոց կուսանաց և մարտիրոսաց* (Պ, 821) ևն¹²: Բերենք նաև հետադաս որոշիչի օրինակներ՝ *հայր երկնաւոր* (Պ, 111, 656), *զազգս մարդկային* (Պ, 354) ևն: Գործածվում են նաև հետադաս որոշիչով այնպիսի կապակցություններ, որոնց թեք ձևերում գրաբարյան օրինաչափությամբ համաձայնություն է գործում, ինչպես՝ *գրոց սրբոց* (Պ, 11), *ի ձեռն յունաց անզգամաց և չարասրտաց* (Պ, 477), *հոգւոյն սրբոյն* (Պ, 581) ևն:

Թեև «Գանձ»-ում ևս որոշիչը հիմնականում նախադաս է, օրինակ՝ *մեծագանձ վաճառատեղի* (Գ, 11), *հաստ իքսին* (Գ, 36) ևն, բայց հանդիպում են նաև հետադաս որոշիչներ, որոնք խիստ սակավ են, ինչպես՝ *երկիրն զազանաբնակ* (Գ, 55), *թռչուն և զազան՝ ընտանի և վայրի* (Գ, 56) ևն: Որոշիչի հետադաս կիրառությունների շարքում առկա է նաև գրաբարյան համաձայնեցված կապակցություն, ինչպես՝ *բերդս և շենս ոչ սակաւս* (Գ, 56):

Որոշիչ արտահայտությունը: Ուսումնասիրվող երկերում որոշիչն արտահայտվում է տարբեր խոսքի մասերով, օրինակ՝ *ածականով՝ վերջին շարն* (ԱՀ, 6) // *վերջի գիրն* (ԱՀ, 53), *թագաւորական քաշն* (Գ, 10) ևն, *թվականով՝ երկրորդ գրի* (ԱՀ, 53), *առաջնոյ մարդոյն* (Պ, 798) ևն, *դերանունով՝ աշխարհիս այսորիկ* (Պ, 473), *ամենայն թիվ* (Գ, 72) ևն, *բայով՝ դերբայով՝ բարդելու թվերն* (ԱՀ, 16), *թրաշած քահրիբարի* (Գ, 11) ևն:

¹¹ Որոշիչի շարադասության վերաբերյալ եղել են տարբեր տեսակետներ. Գ. Ավետիքյանը, Ա. Բագրատունին, Մ. Էմինը և այլք կարծում էին, որ գրաբարում ածականը դրվում էր գոյականից և՛ առաջ, և՛ հետո: Մի խումբ այլ քերականներ, օրինակ՝ Մ. Գարագաշյան, Ս. Գաբամաճյան և այլք, նշում էին, որ որոշիչը գրաբարում սովորաբար հետադաս էր դրվում, հոլովով համաձայնում էր որոշյալին: Ս. Ղազարյանը, Էդ. Աղայանը, Գ. Ջահուկյանը և նման կարծիքներ էին հայտնում: Հ. Ավետիսյանը նշում է՝ 5-րդ դարի գրավոր հուշարձանները վկայում են, որ գերակշռողը որոշիչի նախադաս կիրառությունն էր: Այս հարցի շուրջ տե՛ս Հ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 8–17:

¹² Գրաբարում նախադաս ածականները երբեմն կարող էին հոլովվել և համաձայնել գոյականին:

«Պարզաբանություն» երկում հանդիպում են նաև **գոյականով** արտահայտված որոշիչներ, օրինակ՝ *դոնապան հրեշտակներին* (Պ, 118), *ի Մարիամայ կուսէն* (Պ, 355):

Այսպիսով՝ քննվող երկերի շարահյուսական համակարգում որոշիչը հիմնականում նախադաս է: «Արհեստ համարողութեան» և «Գանձ» երկերում հետադաս որոշիչները խիստ սակավ են, «Պարզաբանություն»-ում ավելի հաճախ են գործածվում՝ թեք ձևերում համաձայնելով որոշյալին և երկի շարահյուսական համակարգին գրաբարյան տարբեր հաղորդելով: Թեև որոշիչն արտահայտվում է տարբեր խոսքի մասերով, սակայն «Պարզաբանություն»-ում և «Գանձ»-ում առավել հաճախ են հանդիպում ածականով արտահայտված որոշիչները, իսկ «Արհեստ համարողութեան» երկում՝ դերբայով արտահայտվածները: Սա հիմնականում պայմանավորված է թվաբանական ձեռնարկի բովանդակությամբ:

Հատկացուցիչ-հատկացյալ կապակցություն: Հայ

քերականագիտության մեջ սովորաբար նշվում է, որ գրաբարում հատկացուցիչն առավելապես հետադաս է¹³: Մ. Մինասյանը, քննելով հատկացուցչի կիրառության առանձնահատկությունները 5-րդ դարում, կազմել է վիճակագրական աղյուսակ և ցույց տվել, որ 5-րդ դարի հայերենում գերազանցում էր հետադաս հատկացուցիչը¹⁴:

«Արհեստ համարողութեան» երկում հատկացուցիչը կիրառվում է նախադաս դիրքում, օրինակ՝ *վերի թվի ձախ կողմի գիրն* (ԱՀ, 20), *երեքի կանոնն* (ԱՀ, 106) ևն¹⁵: Հատկացուցչի նախադաս կիրառությունն արդեն իսկ միջինհայերենյան նորմա էր, հետագայում՝ աշխարհաբարին բնորոշ իրողություն:

Թեև «Պարզաբանություն»-ում նախադաս հատկացուցիչները շատ հաճախադեպ են, ինչպես՝ *փրկագործութեան պտուղն* (Պ, 13), *մահուան շուաքների միջումն* (Պ, 115) ևն, սակայն հետադաս հատկացուցիչով կապակցություններ ևս հաճախ են գործածվում, օրինակ՝ *զգալուստն*

¹³ Տե՛ս **Վ. Չալքիսեան**, Քերականություն հայկազնեան լեզուի հանդերձ փոփոխմամբք եւ յաւելումովք: Ի պետս յառաջադէմ աշակերտաց, Վիեննա, 1885, էջ 248, **Սոս. Մալխասեանց**, Գրաբարի համաձայնությունը, Թիֆլիս, 1892, էջ 85, **Վ. Քոսյան**, Գրաբարի բառակապակցությունները, Երևան, 1980, էջ 14, Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, էջ 169 ևն:

¹⁴ Տե՛ս **Ս. Մինասեան**, Յատկացուցիչ-յատկացեալ կապակցութիւնը գրաբարում, Երուսաղէմ, 1974, էջ 270–271:

¹⁵ Հետադաս հատկացուցիչով կապակցություններ հանդիպում են երկի գրաբարյան առաջաբանում և վերջաբանում:

Քրիստոսի (Պ, 223), *զհայրն մոլորութեան* (Պ, 470) և: Հետադաս հատկացուցչի կիրառությունը դարձյալ գրաբարյան իրողության արտահայտություն է:

«Գանձ»-ում հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունների առատ գործածությունը բնութագրական իրողություն է: Գերակշռում են նախադաս հատկացուցիչով կապակցությունները, ինչպես՝ *Մօսկօվի մսդալան* (Գ, 12), *քահրիբարի և մարջանի քաշն* (Գ, 16) և: Հետադաս հատկացուցիչները սակավ են, օրինակ՝ *մէկ մարքն Վենետիկու* (Գ, 13), *թագաւորն ֆրանցու* (Գ, 52) և:

Հայտնի է՝ գրաբարում *իմ, քո (քոյ), իւր, մեր, ձեր* ստացական դերանուն հատկացուցիչները հոլովով և թվով համաձայնում են թեք հոլովներով դրված հատկացյալին¹⁶: Նման կապակցություն հանդիպում է «Արիեստ համարողութեան» և «Գանձ» երկերի միայն գրաբարյան հատվածներում, ինչպես՝ *յուսոյն մերոյն* (ԱՀ, 145, Գ, 4)՝ ի տարբերություն «Պարգաբանութիւն» երկի, որտեղ դրանք հաճախադեպ են, օրինակ՝ *հաւատացելոց իւրոց* (Պ, 655), *խրատիւք ձերովք* (Պ, 792) և: Գործածվում են նաև հատկացուցիչ-հատկացյալի գրաբարյան բազմանդամ կապակցություններ, ինչպես՝ *Յիսուսի Քրիստոսի որդւոյ քոյ միածնի* (Պ, 471), *աղօթք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի* (Պ, 656) և:

Ինչպես նկատում ենք, հատկացուցիչ-հատկացյալ կապակցության գրաբարյան իրողություններ հիմնականում հանդիպում են «Պարգաբանութիւն» երկի շարահյուսական համակարգում՝ երկի լեզուն որոշակիորեն գրաբարին մոտեցնելով:

Բացահայտիչ-բացահայտյալ կապակցություն¹⁷: Գրաբարում բացահայտիչը կարող էր դրվել բացահայտյալից թե՛ առաջ, թե՛ հետո, սակայն ավելի սովորական էր հետադաս գործածությունը¹⁸: Բացահայտչի տեսակները բուն, մասնական և մասնավորող պարագայական, բնորոշ էին դեռևս գրաբարին: Բացահայտչի և բացահայտյալի միջև կանոնավորված կետադրություն գոյություն չունեի, այդ պատճառով դրանք որոշվում էին տրոհվող արտաբերությամբ¹⁹:

¹⁶ Տե՛ս Մ. Մինասեան, նշվ. աշխ., էջ 91, Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 86:

¹⁷ Բացահայտիչ-բացահայտյալ կապակցության օրինակները կրեքենք բնագրային կետադրությամբ՝ երկերում բացահայտչի կետադրությունը ցույց տալու նպատակով:

¹⁸ Տե՛ս Մտ. Մալխասեանց, նշվ. աշխ., էջ 90:

¹⁹ Տե՛ս Էդ. Մկրտչյան, Գրաբարի դասընթաց, էջ 171:

«Արիեստ համարողութեան» երկի շարահյուսական համակարգում բացահայտիչ-բացահայտյալ կապակցություններ հիմնականում չեն գործածվում: Մասնավորող պարագայական բացահայտիչներ ենք տեսնում հետևյալ օրինակներում՝ «...և մընացածն կու գրենք աջ կողմըն՝ թվերին դեմադդել...» (ԱՀ, 11), «Աւարտեցաւ պիտանացու և շահաւէտ գրգուկս... յամի ներմարմնութեան Տեառն 1675 Նոյեմբերի ամսոյ 21 ի Մարտիլեայ քաղաքի ի հայրապետութեան տեառն Յակոբայ հայոց կաթողիկոսի և ի թագաւորութեան Լուսովիկոսի չորեքտասաներորդի արքային Ֆրանցիզագ» (ԱՀ, 145), վերջին նախադասության մեջ գործածվել է նաև բուն բացահատիչ՝ «...ի հայրապետութեան տեառն Յակոբայ հայոց կաթողիկոսի...» (ԱՀ, 145), «Լուսովիկոսի չորեքտասաներորդի արքային Ֆրանցիզագ...» (ԱՀ, 145):

Ի տարբերություն «Արիեստ համարողութեան» գրքի՝ «Պարգաբանութիւն»-ում բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունները հաճախադեպ են: Բերենք բուն բացահայտչի օրինակներ, որոնք համեմատաբար ավելի քիչ են հանդիպում, ինչպես՝ «...զէրէ եւ Յիսուս Քրիստոսս իմ հօր Աստուծոյ կամօքն և հաճութեամբն թագաւոր եղայ...» (Պ, 17-18), «...քեզ թագաւորիդ մերոյ Յիսուսի Քրիստոսի թշնամիք են...» (Պ, 230), «Այսինքն, Յիսուս Քրիստոս Տէրն և Աստուածն երկնային գօրութեանց երեսն դէպ ի յերկիրս է դարձուցեր...» (Պ, 655) ևն: Շատ հաճախ է գործածվում մասնական բացահայտիչը, որը դեռևս գրաբարում ձևավորվում էր *իբրև, որպէս* նախադրություններով: Հարկ է նշել, որ այստեղ այն հիմնականում արտահայտվում է *իբրև* կապի *իբր* տարբերակով, օրինակ՝ «Այսինքն, և կերողաց սիրտն, իբր հոգին յաւիտեանս յաւիտենից անմահ և կենդանի մնայ...» (Պ, 113), «...և նոցա բեռ տանօղ անասունքն, իբր եպիսկոպոսունքն և քահանայքն ամեննին չի պակասեցան» (Պ, 582) ևն: Ոչ հաճախ հանդիպում է նաև *իբրև* կապը, օրինակ՝ «...իբրև գմարդ աղքատ և տնանկ եմ ես...» (Պ, 590), «...բայց դու իբրև հովիւ բարի...» (Պ, 652) ևն: Մասնավորող պարագայական բացահայտիչ ժամանակակից գրական հայերենին բնորոշ ձևով հիմնականում չի հանդիպում, քանի որ սաղմոսներ պարզաբանողը, ինչպես վերը նշվեց, որևէ երևույթ մասնավորում է հիմնականում *իբրև* կապի *իբր* տարբերակի միջոցով, օրինակ՝ «...իւր սուրբ և երկնային լեռնէն, իբր յիւր աստուածային աթոռոյն

ինձ լսեց....» (Պ, 21), *«....և լսեց Աստուած յանդնորոց դժոխոց, իբր ի խոր գերեզմանէն զիմ աղաչանքն և զիմ աղաղակն»* (Պ, 656) ևն²⁰:

«Գանձ»-ում մասնական բացահայտիչներ չեն գործածվում: Ոչ հաճախ կիրառվում են բուն բացահայտիչներ, ինչպես՝ *«....անթիւ անգին ապրանք՝ ջավահիր՝ ճոթ՝ ապրիշում.... և այլ»* (Գ, 44), *«Ֆրանկստան ունի գայսքան գլխաւոր Կոզիս. Բնգլթեայ՝ Ըսկօտլանդ՝ Բոլանդ....»* (Գ, 52) ևն, հազվադեպ՝ մասնավորող պարագայական՝ *«Թուին Քրիստոսի 1699. Մարտի ամսոյն քստ ֆրանկաց 21. քստ մեզ՝ 11. և նիքիան 26....»* (Գ, 44), *«....ի կատար հասուցանել գայս փոքրիկ գրքուկս յԱմի Տեառն 1699, Ապրիլի 30. և ի Հայոց թիւն 1148, Արեգի 5....»* (Գ, 79-80):

Հարկ է նշել այն կարևոր իրողությունը, որ եթե «Արիեստ համարողութեան» երկի շարահյուսական համակարգում հանդիպող բացահայտչի մեկ-երկու օրինակները կետադրված չեն, «Պարզաբանութիւն»-ում մասնական և մասնավորող պարագայական բացահայտիչների դեպքում *իբրև* կապի *իբր* տարբերակից առաջ դրվում է ստորակետ, ապա «Գանձ»-ում նախադասության այս անդամի կետադրությունը երբեմն արտահայտվում է բուրով, երբեմն՝ միջակետով: Հետևաբար բացահայտիչը և բացահայտյալն արդեն որոշվում են ոչ միայն առոգանությամբ, այլև կետադրությամբ: Մա մեր լեզվի զարգացման կարևոր երևույթներից մեկն է նաև կետադրության համակարգում:

Խնդիրներ: *Սեռի խնդիրներ:* Բերենք ներգործական սեռի բայերի պահանջով դրվող ուղիղ խնդրի օրինակներ վերոհիշյալ երկերից՝ *«....բաժանօղ քիւն պիտինք բաժանելու թվի տակն դնել....»* (ԱՀ, 53), *«....իւր գանձն, ինչն և ապրանքն շատացնէ և պահէ....»* (Պ, 202), *«....երբ մին փոքր թուլ մին որիշ մեծ համարք բաժին բաժին կանենք....»* (Գ, 65) ևն:

Քննվող երկերում կրավորական կառուցվածքի նախադասությունները հիմնականում երկանդամ կրավորական են, ներգործող խնդիրը բացակայում է, օրինակ՝ *«Իսկ տասներորդն, որ գերօ կասվի.... երբ որ այլ գրերին հետ կու գրվի, էնտոնց համարքն կաւելցնէ»* (ԱՀ, 2), *«Այսինքն՝ մի թէ քո քսքանչեիքդ խաւար տեղն կուճանաչվի կամ թէ քո արդարութիւնդ.... կիմացվի մի»* (Պ, 466), *«....ապրիշումն շահի դտրով կու ծախվի....»* (Գ, 39) ևն: Մակայն երբեմն հանդիպում են նաև ներգործող խնդիր ունեցող եռանդամ կրավորական կառույցներ, օրինակ՝ *«Այսինքն»*

²⁰ Մասնավորող պարագայական բացահայտիչը գրաբարում որոշակի էր դարձնում հատկապես տեղի իմաստը: Տե՛ս էդ. Մկրտչյան, Գրաբարի դասընթաց, Երևան, 2008, էջ 172:

մեղաւոր և չարագործ մարդիքն... ք չար սովորութենէ և ք չար ընկերներէ խաբեցան...» (Պ, 301) ևն:

Բնության խնդիրներ: Համեմատաբար լայն կիրառություն ունեն միջոցի, անջատման, վերաբերության անուղղակի խնդիրները, օրինակ՝ միջոցի՝ «*Բայց էս խրատներս օրինակով լաւ կու պարզվի...*» (ԱՀ, 55), անջատման՝ «*....գիս քո ձեռացդ բաց մի՛ թողուր և ինձանից մի՛ հեռանար...*» (Պ, 200), վերաբերության՝ «*Յարազս զանազան Չափոց և Թուոց*» (Գ, 28) ևն: Ոչ հաճախադեպ է հանգման անուղղակի խնդիրը, օրինակ՝ «*....և կանկանի Պողոսին 750 մառչիլ շահ, Ղուկասին՝ 1250, Յոհաննիսին՝ 1500 և Մարտիրոսին՝ 2500*» (ԱՀ, 118) ևն, նվազ կիրառություն ունեն սահմանափակման անուղղակի խնդիրը, ինչպես՝ «*Այս չորս բարաթէս ո՛չ աւելի և ո՛չ պակաս ռադամի դուռն կայ...*» (Գ, 66), բաղկացության՝ «*....քանի՞ զագ մին շոր կու դառնայ էն չուխիցն...*» (Գ, 72), մատուցման՝ «*....Պողոսին պարտք տվի 3425 դիան, Պետրոսին՝ 5243, Մարկոսին՝ 4352 դիան...*» (Գ, 64), համեմատության՝ «*Էստից աւելի էլ դուռն չկայ...*» (Գ, 64) ևն:

Պարագաներ: Առավել հաճախադեպ են տեղի և ձևի պարագաները՝ ի տարբերություն մյուսների, ինչպես՝ «*....6000 մառչիլ շահ անեն մին քաղաքում...*» (ԱՀ, 117), «*....գրեհկօրէն ռադամ անել ստի...*» (Գ, 65) ևն: Բերենք օրինակներ նաև այլ պարագաներից, ինչպես՝ «*....3 ամսումն 20 արասի քիրայ լինի...*» (Գ, 68) (ժամանակի պարագա), «*Այս սաղմոսումս կու խօսի մարգարէն մարդկային լեզուն գգուշացնելոյ համար...*» (Պ, 200) (նպատակի պարագա), «*....նոցա պատճառովն գիս... տնագ և ծաղր արարիր*» (Պ, 203) (պատճառի պարագա), «*....չորս վերի 42 թվի մէջն ինն անգամ կու գտվի...*» (ԱՀ, 59) (չափ ու քանակի պարագա), «*....այն թիվն, որ երրորդ թվին հետ մին բարաթ իքմին այ...*» (Գ, 69) (միասնության պարագա) ևն:

Այսպիսով, թեև քննվող երկերում շարունակում են հանդիպել գրաբարյան շարահյուսության տարրեր, սակայն դրանք մեր լեզվի զարգացման հետագա ընթացքում պիտի աստիճանաբար դուրս մղվեն, քանի որ 17-րդ դարում արդեն կայունանում էր աշխարհաբարի շարահյուսությունը՝ մի կողմ թողնելով հայերենի զարգացման նախորդ փուլերի լեզվական մի շարք առանձնահատկություններ:

Թ. Պողոսյան

17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի շարահյուսական համակարգի
յուրահատկություններ
Ամփոփում

Սույն հոդվածը նվիրված է 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի շարահյուսական համակարգին: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրաբարյան տարրերին զուգահեռ հանդիպում են աշխարհաբարի շարահյուսության նախատիպ որոշ հատկանիշներ և կառույցներ՝ վկայելով աշխարհաբարի շարահյուսության նորմավորման մասին, օրինակ՝ ենթական հիմնականում նախադաս է (*«Մին մարդ մի ունի այսչափ մառչիլ...»*, *«...տերնն ամեննին չի պիտի թափվի...»* ևն), որոշիչը և հատկացուցիչը՝ նույնպես (*մեղաւոր մարդկանց չար գործոցն*, *փրկագործութեան պտուղն* ևն), բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունը որոշվում է ոչ միայն առոգանությամբ, այլև կետադրությամբ, որը որոշակի կանոնավորում բերեց նաև կետադրության համակարգում: Այս և մի շարք այլ յուրահատկություններ վկայում են, որ վերոնշյալ երկերի շարահյուսական համակարգի հիմքում աշխարհաբարի շարահյուսության նախատիպն է, որը հետագայում պիտի առավել նորմավորվեր:

Т. Погосян

**Особенности синтаксической системы печатных книг на ашхарабаре
(новоармянском языке) в XVII веке**

Резюме

Данная статья посвящена системе синтаксиса в печатных книгах на ашхарабаре (новоармянском языке) в XVII веке. Исследование показывает, что параллельно с элементами грабара (староармянского) встречаются некоторые особенности и структуры синтаксиса ашхарабара, что свидетельствует о нормировании синтаксиса ашхарабара. Например, подлежащее обычно находится в препозиции (*«У некоего человека столько-то денег ...»*, *«листья совершенно не опадают...»* и т.д.), определение и несогласованное определение – тоже (*злые поступки грешников, результат спасения* и т. д.), определитель и определяемый выделяются не только произношением, но и пунктуацией, что также приводит к некоторому урегулированию пунктуации. Эти и другие особенности позволяют предположить, что основная синтаксическая система вышеупомянутых книг является прототипом синтаксиса ашхарабара, который в дальнейшем продолжал нормироваться.

Tamara Poghosyan

**The Peculiarities of the Syntactic System of the 17th Century
Modern Armenian Printed Books**

Summary

This article is dedicated to the syntactic system of the 17th century Modern Armenian printed books. The study shows that in parallel with the Old Armenian elements, some of the prototypical features and structures of the Modern Armenian syntax occur, testifying about the normalization of the Modern Armenian syntax, for example, the subject and the attribute are mainly in the first position, the apposition and the appositive are determined not only by accent but also by punctuation, which also brought some

regulation to the punctuation system. These and a number of other peculiarities suggest that in the basis of the syntactic system of the above mentioned compositions lies the prototype of the Modern Armenian syntax, which later would have been more normalized.

*Խմբագրություն է ուղարկվել 01.07.19
Հանձնարարվել է գրախոսության 08.07..19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19*

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԻՆԵ ԳԻԼԱՎՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Բան. գիտ. թեկն., դոցենտ
gilavyan.meline@mail.ru

ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ ՄԱՆԿԱԳԻՐ

Բանալի բառեր և արտահայտություններ. հեքիաթ, վանդակ, ծիածան, լույս, սունկ, կանաչ երկիր, ծաղկած այգի

Ключевые слова и выражения: сказка, каляска, радуга, свет, гриб, зеленое поле, синее небо, цветущий сад

Key words and expressions: fairy tale, cage, rainbow, light, mushroom, green field, blue sky, blown garden.

Հոդվածում քննության են առնվում նորագույն շրջանի հայ գրականության տաղանդաշատ բանաստեղծներից մեկի՝ Արմեն Մարտիրոսյանի մանկական բանաստեղծությունների դաստիարակչական, ճանաչողական նշանակության, գեղարվեստական յուրահատկությունների վերաբերյալ հարցերը:

Մասնավորապես նշվում է, որ բանաստեղծը անկեղծ գրուցում է իր մանուկ ընթերցողների հետ, լսում նրանց, նրանց պես հրճվում, ուրախանում, զարմանում, ինչը շատ կարևոր է մանկական գրականության համար:

Արմեն Մարտիրոսյանը 1960-ականներին գրականություն եկած այն բանաստեղծներից է, որոնք միանգամից հայտնվեցին քննադատության և ընթերցողիների լայն շրջանի ուշադրության կենտրոնում: Նրա առաջին բանաստեղծությունները տպագրվեցին <<Գարուն>> ամսագրում, որը մեծ